ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

31 ՄԱՅԻՍԻ 2020 թ.

№ 6 (1056)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈ՞Ր ՏՈՆԴ, ՀԱՅԱՍՏԱ՛Ն

1918-ի Մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման մասին:



Մայիսի 28-ը մեր պատմության ամենապայծառ ու փառահեղ էջն է, որտեղ լուսավոր տառերով գրված են Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսների անունները:

Առաջին Հանրապետության օրը խորհրդանշում է հայ ժողովրդի դարավոր իղձերի մարմնավորումն ու երազի վերագտնումը: Ազգային վերածննդի, պետականության ձևավորման, անցյալն արժևորելու և ներկան ապագային կամրջելու օր:

Շնորհավո՞ր տոնդ, Հայաստա՛ն:

ՀԱՆՈՒՆ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԸՆԴԴԵՄ ՄԱՀԻ

Սա այն դաշտն է, ուր թվում էր՝ ամեն ինչ պիտի վերջանար… Պիտի վերջանար մի ազնվագույն ժողովուրդ, մի մեծասքանչ լեզու և մի փառահեղ քաղաքակրթություն: Բայց այստեղ ամեն ինչ նորից սկսվեց… Եվ սկսվեց մի այնպիսի ժամանակ, երբ մարդկային ամենահասարակ տրամաբանությունն իսկ ասում էր, թե այլևս ոչինչ չի կարող սկսվել, քանի որ բառացիորեն մեն-մենակ էինք արար աշխարհում, մենակ, անպաշտպան, ծվատված ու արյունաքամ…Ճիշտ է, Սարդարապատի օրերին դեռ չէր հնչել Չարենցի պատգամը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», բայց նրա էությունը, որպես ժողովրդի հավաքական ենթագիտակցություն ու բնազդ, կար, գործում էր և Սարդարապատի օրերին գործեց մինչև այդ պատմության մեջ չտեսնված ուժով ու թափով, գործեց բարձրագույն լարումով: Քրքրելով մեր պատմության կրակն ու մոխիրը, չի կարելի չգալ այն հաստատ համոզման, որ Սարդարապատը մեր ժողովրդին բաժին ընկած ամենասև փորձությունն էր, բայց և աստղային ամենավսեմ ժամը: Նրա պատմական խորին խորհուրդը մինչև հիմա լիովին չի գիտակցված ու չի գնահատված: Դա կյանքի ու մահու սահմանագիծ էր և իր նշանակությամբ շատ ու շատ ավելին, քան լեգենդացած ու սրբագործված Ավարայրը: Հայաստանն այն ժամանակ թեև Պարսկաստանից ոչ անկախ, բայց ներքին զորությամբ ու կենսահյութով էր լի: Կենաց ու մահու հարցը սպառնալիորեն չէր կախված Ավարայրի վրա: Ավարայրը պատերազմ էր հանուն հավատի: Սարդարապատը պատերազմ էր հանուն կյանքի և ընդդեմ մահի:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ
«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ»

ԱԲՈՎՅԱՆԻՑ ՄԻՆՉ ԱՅՍՕՐ

Ամբողջ կյանքում լույս ես տալիս,
Ապագայի հույս ես տալիս,
Անսիրտ-անհույս այս աշխարհում
Դու մեզ սիրտ ու հույզ ես տալիս:
Առանց մտքի՝ մարդը թույլ է,
Դու մեզ միտք ու ուժ ես տալիս:

Այս բանաստեղծական տողերը Մանկավարժական համալսարանի 85-ամյակի առթիվ է գրել բանաստեղծ, Երևանի պատվավոր քաղաքացի, Մանկավարժական համալսարանի (այն ժամանակ՝ ինստիտուտ) 1960 թվականի շրջանավարտ Արամայիս Սահակյանը:

Մանկավարժական համալսարանն են ավարտել Հրանտ Մաթևոսյանը, Ռազմիկ Դավոյանը, Լիպարիտ Սարգսյանը, Սուրեն Մուրադյանը և շատ այլ տաղանդավոր գրողներ, տարբեր ոլորտների հանրաճանաչ մտավորականներ, որոնք հարազատ բուհի կենսագրությունն են կերտել՝ սերունդներին փոխանցելով իրենց ժամանակի ու պատմության ընթացքը: Որ ամեն առավոտ, Մանկավարժական համալսարանի շեմին ոտք դնող ուսանողը հպարտության զգացումով մի պահ կանգ առնի համալսարանի հիմնի ներքո, արժևորի իր ընտրությունն ու ուսումնառության տարիները.

Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճամփան ես մեր լուսավոր
Աբովյանից մինչ այսօր:

ՄԱՅԻՍԻ 28. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄՈՎ

Լրանում է Հայաստանի Առաջին Հանրապետության 102-ամյակը: 1918 թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը որոշում կայացրեց անկախ Հայաստանի անունից պատվիրակություն (Ա. Խատիսյան, Հ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան) ուղարկել Բաթում՝ թուրքերի հետ հաշտություն կնքելու: Հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, գումարվեց Հայոց ազգային խորհրդի, Անդրկովկասյան սեյմի դաշնակցական ներկայացուցիչների, ինչպես նաև ՀՅԴ արևելյան և արևմտյան բյուրոների, Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի համատեղ նիստ, որտեղ վերջնական որոշում կայացվեց Հայաստանը անկախ հանրապետություն հռչակելու մասին:

Նիկոլ Աղբալյանին հանձնարարվեց մշակել անկախության վերաբերյալ հայտարարության (հռչակագիր) տեքստը: Մայիսի 30-ին Հայոց ազգային խորհուրդը ընդունեց հետևյալ հռչակագիրը. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»:

Հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը (1918-1920 թթ.), որը հայոց նորագույն պատմության լուսավոր էջերից է: Այն շուրջ վեցդարյա կորսված անկախությունը վերականգնելու փառավոր սխրանքի մարմնացում է: Հայաստանի Առաջին Հանրապետությունը միաժամանակ պետականություն կերտելու դասական օրինակ է հաջորդ բոլոր սերունդների համար: Ցավոք, ռազմաքաղաքական իրավիճակի բերումով, Հայաստանի Առաջին Հանրապետությունն ընդամենը երկուսուկես տարվա կյանք ունեցավ: Սակայն այդ կարճ ժամանակաշրջանի դասերի յուրացումն էլ բավարար է թե՛ անկախությունն արժևորելու, թե՛ պետականության հզորացումը հնարավորինս անսխալ իրականացնելու առումով:


1/1-1

Հայոց Ազգային Խորհուրդ.

Ադրբեջանի խորհրդային սոցիալական Հանրապետության անկախությունը ճանաչելով և վերջինիս հետ դաշնակցելով՝ Հայոց Ազգային խորհուրդը ստանձնում է Հայկական գավառների գերագույն և միակ իշխանության գործառույթները: Որոշ ծանրակշիռ պատճառներով մոտիկ օրերում կազմել հայոց ազգային կառավարությունը՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար: Հայոց Ազգային Խորհուրդ

1918 թ. մայիսի 30.
Թիֆլիս:

Անկախությունը հայ ժողովրդի՝ սեփական հողի վրա ապրելու, զարգանալու, առաջադիմելու և իր ճակատագիրն ինքնուրույն վարելու անբռնաբարելի իրավունքն է: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն յուրովի նրա անկախության ձեռքբերման կամ պահպանման համար մղված պայքարի պատմություն է: Այս տեսակետից առավել ցայտուն է հայ ժողովրդի պատմության օրինակը:

Անկախության գաղափարի դավանանքը քաղաքակրթական արժեք է: Միայն անկախության պայմաններում են ժողովուրդներն ինքնադրսևորման լիարժեք հնարավորություն ստանում: Քաղաքակիրթ մարդկության կողմից պաշտելի արժեքին արժանի է նաև հայ ժողովուրդը:

1918 թ. մայիսի 28-ին հայ ժողովուրդն իր կամքի և պայքարի ոգու շնորհիվ իր ազատ և անկախ ապրելու ցանկությունն իրականություն դարձնելով՝ այն պարտադրեց իր թշնամիներին:

Հայոց ներկա պատմության կիզակետը Հայաստանի անկախությունն է: Հայ ժողովրդի հավաքական քաղաքական դիմագիծը բնորոշվում է իր անկախության հանդեպ ունեցած վերաբերմունքով: Առանց անկախության հայ ժողովուրդը զուրկ է հավաքականությունից:

Անկախությունը համարելով ի վերուստ տրված պարգև՝ ժողովուրդներն ամեն ջանք գործադրում են՝ պահպանելու, նվաճելու կամ վերանվաճելու այն՝ նույնիսկ գնալով ամենաթանկ զոհողությունների:

Անկախությունը վերականգնելուց զատ, ինչպես նշեցինք, Առաջին Հանրապետությունից նաև պետականակերտման դաս ենք ժառանգել: Ցեղասպանությունից հետո որբերով և գաղթականներով լեցուն երկրում պատերազմից ավերված տնտեսության, սովի, համաճարակի, սահմանային վեճերի և մաշող պատերազմների, ներքին կռիվների պայմաններում հնարավոր եղավ ստեղծել այն հիմքը, որի վրա կառուցվեց Խորհրդային Հայաստանը, և հետո ներկայիս հանրապետությունը:

Խաչատուր ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Բանասիրականի քույրիկները



Ծնվել նույն օրը, նույն ժամին, նույն ընտանիքում, սովորել նույն դպրոցում, համալսարանում ու նույն ֆակուլտետում... Երկվորյակ քույրեր Աննա և Դիանա Մելումյանները ծնունդով Աշտարակ քաղաքից են: Նրանք սովորում են ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսում:

«Մանկուց երազել եմ ուսուցիչ դառնալ, աշխատել երեխաների հետ, այդ պատճառով մասնագիտական ընտրությունս կանգ առավ հենց Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի վրա: Այս տարիների ընթացքում համալսարանական պրակտիկաս ցույց տվեց, որ ճիշտ ընտրություն եմ կատարել, հույս ունեմ, որ հետագայում լավ ուսուցիչ կդառնամ»,-ասում է Աննան ու անկեղծանում՝ ծնողներն իր համար այլ մասնագիտություն էին ընտրել. «Մայրս միշտ ինձ պատկերացնում էր սպիտակ խալաթով բժշկի կերպարում»:

Դիանան էլ իր հերթին պատմում է, որ իր ընտրության հարցում դեր է ունեցել նաև գենետիկան: «Մայրս շատ էր ուզում, որ ես ու քույրս բնագիտական որևէ մասնագիտություն ընտրեինք: Կարծում եմ մեր մասնագիտության ընտրության հարցում, բացի սեփական ցանկություններից ու նախասիրություններից, ազդեցություն է ունեցել նաև գենետիկան: Տատիկս նույնպես ուսուցչուհի է, և, անշուշտ, նրա ազդեցությունը մեծ է եղել, որ մանկուց ցանկացել եմ մանկավարժ դառնալ:

Ընտրել եմ Մանկավարժական համալսարանը, քանի որ կարծում եմ՝ հենց այս համալսարանն է հնարավորություն ընձեռում մանկավարժական գիտելիքներ ստանալ՝ հետագայում լավ մասնագետ լինելու համար: Բանասիրական ֆակուլտետ ընդունվել եմ, որովհետև թե՛ հայոց լեզուն, թե՛ գրականությունն իմ ամենասիրելի առարկաներն են:

Մենք երկվորյակներ ենք, մեր մեջ կապը շատ մեծ է, բայց կարծում եմ այդ կապը չի եղել պատճառը, որ ցանկանք նույն վայրում սովորել, պարզապես մեր նախասիրությունները մեզ ուղղորդեցին դեպի այս ֆակուլտետ, չնայած սկզբում ծնողներս դեմ էին, որ երկուսս էլ նույն ֆակուլտետ ընդունվենք, խորհուրդ էին տալիս տարբեր մասնագիտություններ ընտրել»:

Գիտությունը վաղուց ապացուցել է, որ երկվորյակների դեպքում անտեսանելի կապվածությունը շատ ավելի մեծ է, քան մնացած քույր-եղբայրների դեպքում: Դիանան ու Աննան այս ամենի վառ ապացույցն են:

«Լինում են պահեր, որ մենք զգում ենք իրար, զգում ենք՝ այդ պահին ինչ ենք մտածում: Օրինակ՝ ստացվել է, որ տարբեր սենյակներում նույն թեմայով շարադրություն ենք գրել ու հետո համեմատելով տեսել ենք, որ գրել ենք նույն նախադասությունը կամ նույն միտքը»,- ասում է Աննան ու ժպտում՝ ինքն էլ չհասկանալով անտես թելերի կապը:

Հետաքրքրվում եմ՝ հաճա՞խ են շփոթում քույրերին համալսարանում և օգնո՞ւմ է նմանությունը խորամանկությունների դիմել:

«Համալսարանում շատ են շփոթում, չնայած կուրսում մեր ընկերներն արդեն կարողանում են հեշտությամբ տարբերել մեզ: Նույնիսկ ձայնից, արտաքինից, շարժուձևից արդեն տարբերում են: Ունենք դասախոսներ, որոնք դեռ շփոթում են մեզ: Հաճախ են մեզ հարցնում՝ եղել է, որ քննություններին մեկս մյուսի փոխարեն պատասխանենք: Անկեղծ ասեմ՝ չի եղել, որ մեկս մյուսի փոխարեն քննություն հանձնի, որքան էլ լավ պատրաստված լինի, անգամ չենք էլ մտածել այդ մասին»,-ասում է Դիանան:

Աղջիկները նշում են, որ նույն ֆակուլտետում սովորելը շատ է օգնում: «Մեկս մյուսի սխալը տեսնելով, սովորելը տեսնելով՝ հետևություններ է անում ու շատ ավելի հեշտ է լինում միասին սովորելը: Իրար նյութեր ենք տրամադրում, մեկս կարող է մի քիչ շատ իմանալ, մեկս՝ ավելի քիչ, իրար լրացնում ենք, համալսարանում սովորածը քննարկում ենք, մեր կարծիքներն ենք հայտնում տարբեր հարցերի վերաբերյալ: Միանշանակ կարող եմ ասել, որ նույն ֆակուլտետում ու նույն կուրսում սովորելը չի վնասում, ավելի շատ օգնում է»,- ասում է Աննան:

Չնայած զբաղված առօրյային՝ քույրերը ազատ ժամանակ գտնում են սիրելի գործերով զբաղվելու համար:

«Սիրում եմ հայ և արտասահմանյան հեղինակների ստեղծագործություններ կարդալ, ֆիլմեր դիտել, այցելել թատրոններ, ներկայացումներ դիտել: Իրավիճակով պայմանավորված՝ հիմա տխրում եմ, որ չեմ կարողանում իմ սիրելի ներկայացումները դիտել, բայց կարծում եմ շուտով էլի կունենամ այդ հնարավորությունը»,-ասում է Աննան:

Երբ խոսում էինք հեռավար կրթության դրական ու բացասական կողմերի մասին, աղջիկները նշեցին, որ ստեղծված պայմաններում այս տարբերակով կրթությունը լավ հնարավորություն է ուսումը կիսատ չթողնելու, ինչ-որ չափով համալսարանական կյանքը շարունակելու համար: Բայց երկուսն էլ փաստում են, որ ցանկանում են նորից համալսարան գնալ, քանի որ կենդանի շփմանը ոչինչ չի կարող փոխարինել:

«Որպես ապագա ուսուցիչներ՝ սա էլ էր մեզ համար լավ փորձ: Պրակտիկայի ընթացքում հեռավար դաս ենք վարել: Կարծում եմ, որ հետագայում այս փորձառությունը շատ կօգնի մեզ»,-ասում է Աննան:

Աղջիկները փաստում են, որ Բանասիրական ֆակուլտետում մի ուրիշ, չկրկնվող ջերմություն կա, սեր կա ամեն անկյունում, կա նվիրվածության ու պատասխանատվության մեծ զգացում թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների մեջ, իսկ ահա ֆակուլտետում արտալսարանային տարբեր ակումբներն օգնում են, որ ուսանողը դասերից հետո ազատ ժամանակը շատ ավելի լավ անցկացնի ու նոր գիտելիքներ ստանա:

Լիանա ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԵՍ ԾՆՎԵԼ ԵՄ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Ես ծնվել և ապրում եմ մանկավարժի ընտանիքում: Իմ մեջ գրքերի և ուսուցչության հանդեպ սերը սերմանվել է դեռ վաղ մանկությունից, քանի որ տատիկս և մայրս ուսուցչուհիներ են: Իմ մանկական հիշողություններում վառ ուրվագծված է մեր տան մեծ գրադարանը՝ հաստափոր գրքերով, որոնք մանուկ ժամանակ ինձ ծանր, անհասկանալի և առեղծվածային էին թվում, իսկ դրանք շոշափելը՝ մեծագույն հաճույք: Արդեն հասուն տարիքում հնարավորություն ունեցա ընթերցել և մեծ բավականություն ստանալ գրքերում թաքնված այն առեղծվածներից, որոնք մի ժամանակ անհասանելի էին թվում:

Բանասերի մասնագիտությանս ընտրության հարցում իր կնիքն է դրել նաև այն բնությունը, որի գրկում ծնվել, ապրել ու մեծացել եմ ես: Գետը, որ հոսում է մեր տան կողքով, Քասավի Շաղվերդ վտակը՝ ձկներով լի, որ հոսում է մեր այգու կողքով, ձկների խայտը, արագիլների ամենօրյա չուն…

Ընդունվելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետը՝ ես էլ ավելի համոզվեցի ընտրությանս ճշմարտացիության հարցում. մեր գիտակ դասախոսները ոչ միայն գրքեր և հոդվածներ են հրատարակում, այլև աջակցում են, որ մենք էլ հրատարակենք, օգնում են, որ մենք ամեն օր, ամեն ժամ ձգտենք կրթության լույսին, որը դարերի խորքից մեզ են ավանդել Մեսրոպ Մաշտոցն ու հայ գրականության երևելիները:

Էմմա ՍԻՄՈՆՅԱՆ, Բանասիրական ֆակուլտետ

ՈՒՍՈՒՑԻՉ ԼԻՆԵԼՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է, ՆՎԻՐՈՒՄ

Հինգերորդ դասարանի աշակերտ էի և մինչ օրս հիշում եմ, թե ինչպես «Մայրենի» առարկայի ուսուցչուհիս հանդարտ ու սահուն քայլերով մտավ դասարան... Միասին անցանք երկար ճանապարհ, իսկ վերջում ես ընտրեցի ուսուցչի մասնագիտությունը: Ինչպես հասկանալի է, պատրաստվում եմ պատմել ուսուցչի մասնագիտության մասին: Իրականում մեր հասարակության մտածելակերպի մեջ ուսուցիչն ունի վերարժևորման կարիք: Բոլորը չէ, որ կարող են ուսուցիչ լինել, քանի որ ուսուցիչ լինելն առաքելություն է, այն նվիրում է: Հաճախ է քննարկվում այն հարցը, թե ուսուցիչ լինելն սկսվում է առարկայական գիտելիքների՞ց, թե՞ մեթոդական իմացությունից: Ես մտածում եմ, որ ուսուցիչ լինելն սկսվում է այն հոգեվիճակից, երբ դու պատրաստ ես արժեք փոխանցել: Իսկ դրան հասնելը հեշտ գործ չէ. չես կարող այսօր որոշել ու վաղը դառնալ. անգամ ծիծաղելի է հնչում: Անհրաժեշտ է ճանապարհ անցնել. հաղթահարել ներքին անհանգստությունները, հիասթափությունները, սովորել գնահատել ձեռք բերածն ու շարունակ քայլելով՝ փորձել հասնել այն իդեալին, որը կերտել ես մտքում ու պահել ներսում: Ուսուցիչ լինելը սահման չունի, վերջ չունի. նա շարունակ քայլում է…

Ես էլ եմ գիտակցաբար քայլում իմ կերտած ուսուցչին հասնելու ճանապարհով ու թեև ունեմ դեռ չհաղթահարած պատնեշներ, միևնույնն է, շարունակելու եմ քայլել. ուսուցիչ լինելն առաքելություն է ու նվիրում:

Նելլի ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 3-րդ կուրս

Հպարտությամբ ներկայացնելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը՝ վստահ կարող եմ ասել, որ կրթությունն ինձ համար բարձրագույն արժեք է, և այդ գիտակցումն ինձ պարտավորեցնում է անմնացորդ նվիրվել իմ ընտրած մասնագիտությանը և դաստիարակել, կրթել ապագայի լիարժեք քաղաքացի, քայլել ժամանակին համահունչ:
Վստահ եմ, որ ընտրել եմ իմ հոգու և սրտի մասնագիտությունը: Մանուկների աշխարհը նման է հեքիաթի, այդ հեքիաթը պետք է ողողել վառ գույներով:

Երանի վրձնով կարողանայի փոխել աշխարհը

Սկզբնական կրթության ֆակուլտետում կարողացան այս մասնագիտությունը մեր մեջ այնպես սերմանել, որ կարծ ժամանակում այն ամուր արմատներ գցեց:

Մեզ դասավանդվում են բազմաթիվ առարկաներ, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն տեղն ունի մեր մասնագիտական գիտելիքների ձեռքբերման և ամրապնդման գործում: Սակայն այսօր ցանկանում եմ խոսել այն առարկայի նշանակության մասին, որը երեխայի համար խաղից հետո ամենասիրելի գործունեության տեսակն է, իսկ ուսանողների համար՝ կարևոր առարկա, որը կոչվում է կերպարվեստ:

«Կերպարվեստի տեսություն և մեթոդիկա» առարկան նորովի բացեց իր դռները մեր առջև, որովհետև մեր դասախոսն իր գեղագիտական նուրբ ճաշակով, ինքնատիպությամբ, բարությամբ, միևնույն ժամանակ՝ պահանջկոտությամբ կարողացավ մեր մեջ սեր արթնացնել դեպի նկարչությունը, գեղեցիկը:

Ստեղծված արտակարգ պայմաններում առարկան հնարավորություն տվեց չկտրվել բնության մեջ գեղեցիկն ընկալելու կարողությունից, շարունակեցինք հաղորդակցվել, փոխանակվել մտքերով, նոր գաղափարներով: Ստեղծվեցին նոր հնարավորություններ թե՛ շփվելու, թե՛ ստեղծագործելու համար: Ստեղծագործելը մի գործընթաց է, որն արտացոլում է մեր ներաշխարհը, այն աշխարհը, որ միայն մերն է: Երբ նկարները դիտում ես սրտով, կարողանում ես ներթափանցել, հասկանալ նկարչի հույզերը, զգացմունքները, ուրախությունը, վիշտը, թախիծը:

Ինքնամեկուսացման պայմաններում էլ «Կերպարվեստի տեսություն և մեթոդիկա» առարկայի շնորհիվ մենք կարողանում ենք ճիշտ օգտագործել ժամանակը. շարունակում ենք նկարել և հայտնվում ենք գույների կախարդական աշխարհում, բացահայտում և վերագտնում ենք մեզ: Այս ժամանակահատվածում ստեղծել ենք բազմաթիվ աշխատանքներ՝ մեզ համար հայտնաբերելով նոր գույներ, նոր կյանք, նոր շունչ:

Նկարչությունը տեսողական արվեստ է: Նկարելու համար կարևորագույն պայման է ներքին խաղաղությունն ու հանգստությունը, որից կծնվեն գունեղ, կենսաբեր նկարներ: Նկարելիս մոռանում ես ամեն ինչ: Երբ ձեռքիդ հայտնվում է վրձինը, երբ այն հպում ես թղթին, տեղափոխվում ես կախարդական մի աշխարհ, որտեղ ամեն ինչ հեքիաթային է՝ լի գույներով, հույզերով ու զգացմունքներով: Վրձինը նման է կախարդական փայտիկի, որի մի հարվածով կարող ես կենդանացնել երազանքներդ:

Այս առարկան դարձավ այն լավագույն միջոցը, որը հնարավորություն ընձեռեց՝ հաղթահարելու ստեղծված արտակարգ իրավիճակը, մոռանալու ազատ շփվելու, բնության գեղեցկությունը գնահատելու և վայելելու հնարավորությունից զրկված լինելը: Նկարչությունը մի կենարար ուժ է, որի միջոցով կարող ես արտահայտել ամենաազնիվ, ամենաբարի, ամենամաքուր, ամենախաղաղ զգացմունքները:

Կյանքը լի է վառ գույներով, և նկարներն էլ հաճախ ծնվում են պահի թելադրանքով: Տխուր պահերին մենք պետք է գիտակցենք, որ ամեն վայրկյանը թանկ է, հիշենք, որ մենք հուսալի «ընկերներ» ունենք՝ վրձինն ու գունանյութերը, որոնք միշտ մեր կողքին են, իսկ բոլոր դժվարություններն անցողիկ են:

Երանի վրձնով կարողանայի փոխել աշխարհը…

Ջուլիետա ՄԱՆՈՒԿՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետի
Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկայի բաժնի 2-րդ կուրս

ԵՍ ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՄ

Ես հատուկ մանկավարժ եմ: Ուսումնառությանս առաջին իսկ օրերից զգացել եմ համալսարանական կթօջախի՝ դասախոսների ու ավագ ուսանողների ջերմությունը, ինչպես նաև առանձնահատուկ վերաբերմունքը յուրաքանչյուրիս հանդեպ: Ու ես հաստատակամորեն որոշեցի լինել օրինակելի ուսանող, որ ես էլ կարողանամ նույնն անել ապագա սերունդների համար, որ կարողանամ նրանց փոխանցել իմ մասնագիտության ջերմությունն ու այն ամենը, ինչ ստացել եմ հարազատ բուհիս հարազատ ֆակուլտետում:

Տարիների հետ հաջողություններս բազմապատկվել են, ֆակուլտետը կարծես ինձ իր հոսանքով վեր էր բարձրացնում, ավելի տեսանելի դարձնում իմ ներուժը, քայլ առ քայլ բարձրանում էի՝ մասնագիտական ձեռքբերումներ, միջոցառումներ, հանդիպումներ, միջազգային ծրագրեր, որոնց արդյունքում մեկնեցի Բելառուս, ծանոթացա տեղի մանկավարժական համալսարանի և ուսանողների հետ, ընտրվեցի ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ: Եվ այսպես շարունակաբար իմ առօրյան օրեցօր, տարեցտարի լցվում էր ուսանողական միջոցառումների բազմազանությամբ ու գունագեղությամբ, ինչի արդյունքում հիմա վստահորեն կարող եմ ասել, որ ես հասել եմ իմ առջև դրված նպատակին, այո՛, ես կայացել եմ շնորհիվ իմ մասնագիտության, շնորհիվ իմ ստացած գիտելիքների և պրակտիկ գործունեության:

Որպես ուսանողական խորհրդի նախագահ՝ արդեն 4 տարի է, ինչ ջերմությամբ ու սիրով սպասում եմ մեր ապագա ուսանողների նորամուտին, դիմավորում եմ նրանց, անում հնարավորինը, որպեսզի նրանք էլ զգան այն, ինչ ես եմ զգացել տարիներ առաջ, երբ ոտք եմ դրել Մանկավարժականի շեմից ներս:

Բակալավրի կրթական ծրագիրն ավարտել եմ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի օլիգոֆրենոմանկավարժություն բաժնում և այնքան սիրեցի մասնագիտությունս, որ երկրորդ կուրսից որոշումս անդրդվելի էր՝ ես պետք է շարունակեմ այս ուղղությամբ: Ահա իրագործեցի այդ նպատակս և՝ ընդունվեցի մագիստրատուրա՝ հատուկ մանկավարժություն մասնագիտությամբ: Հիմա կարողանում եմ ստացածս գիտելիքները, պրակտիկաների ակտիվ գործունեության ժամանակ ձեռք բերածս կիրառել ի նպաստ մեր հրաշք բալիկների:

Մի պահ հետ նայելով՝ հասկանում եմ, որ զղջալու ոչինչ չունեմ. հինգ անմոռանալի տարիներ, ուսանողական ընկերներ, բարձրակարգ գիտելիքներ և հրաշալի պրոֆեսորադասախոսական անձնակազմ՝ ահա իմ ամենամեծ ձեռքբերումները: Եթե հնարավորություն տվեր՝ ես նորից ու նորից կընտրեի այս ֆակուլտետը, իմ սրտի ֆակուլտետը, որն ինձ դարձրեց իրազեկ և մտահոգ քաղաքացի, լավ մարդ և լավ մասնագետ:

Աննա ՄԵԼՔՈՆՅԱՆ
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ
Հատուկ մանկավարժություն, մագիստրատուրայի 1-ին կուրս

Թանգարանների միջազգային օրը մայիսի 18-ին նշվող ամենամյա տոն է: Այն հռչակվել է Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM - The International Council of Museums) որոշմամբ 1977 թվականի մայիսի 18-ին ԻԿՕՄ-ի 11-րդ գլխավոր կոնֆերանսի ընթացքում՝ ռուսական պատվիրակության առաջարկությամբ: 1978 թվականից յուրաքանչյուր տարի այս օրը նշում է աշխարհի ավելի քան 150 երկիր, այդ թվում և Հայաստանը:

1992 թվականից սկսած յուրաքանչյուր Թանգարանային միջազգային օրն ունի թեմա, և ԻԿՕՄ-ը հրապարակում է տվյալ թեմայի հետ կապված միջոցառումները: Տոնի շրջանակում անց է կացվում նաև «Թանգարանների գիշեր»: Այդ օրը Հայաստանի թանգարաններն այցելուների համար բաց են լինում երեկոյան 18:00-ից մինչև կեսգիշեր: Թանգարանները հանդես են գալիս նաև մի շարք միջոցառումներով:

«Հին և նոր». լուսանկարչական էլեկտրոնային ցուցադրություն Մանկավարժականում

1. Մանկավարժական ինստիտուտի դասախոսական կազմը ինստիտուտի շենքի դիմաց, հանդիպում պարուհի Օլգա Լեպեշինսկայայի հետ: Լուսանկարում՝ Յուրի Երզնկյան, Սուրեն Հասմիկյան, Կառլեն Միրզախանյան, Օլգա Լեպեշինսկայա:

2. Դիպլոմների հանձնման արարողություն: Գարեգին Բ կաթողիկոս և ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյան:

ՀՊՄՀ գիտական թանգարանը միակն է ՀՀ բուհական թանգարանների մեջ, որը ստեղծվելուց ի վեր ամեն տարի մասնակցում է «Թանգարանների միջազգային օրվան» նվիրված «Թանգարանային գիշեր» միջոցառմանը:

Չնայած արտակարգ դրության պայմաններում ստեղծված որոշակի դժվարություններին, ինչպես ամեն տարի, այս տարի ևս անմասն չմնալով «Թանգարանների միջազգային օրվան» նվիրված միջոցառումներից, որոնց այս տարի կրում է «Թանգարանները հանուն հավասարության. բազմազանություն և ներառականություն» խորագիրը, ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի հետ համատեղ կազմակերպվել է «Հին և նոր» խորագիրը կրող լուսանկարչական աշխատանքների ցուցադրություն: Ներկայացված հին ու նոր լուսանկարներն այսօր պահվում են թանգարանի ֆոնդում, նոր լուսանկարների հեղինակների մի մասը գեղարվեստական լուսանկարչության բաժնի ուսանողներ են, դասախոս՝ Արմեն Խաչատրյան:

Ցուցադրությունը ներկայացնում է Մանկավարժական համալսարանի պատմության վերաբերյալ հին արխիվային լուսանկարներ՝ մեր ժամանակների պատմության լուսանկարների համադրությամբ:

ՀՊՄՀ գիտական թանգարան

Ավարտական դասարանների աշակերտները մշտապես սրտի թրթիռով են սպասում դպրոցական «Վերջին զանգ» արարողությանը: Մանկավարժական համալսարանի N 57 հիմնական դպրոցի և Ավագ դպրոց-վարժարանի ամեն տարվա շրջանավարտներն այնքան խնամքով, յուրահատուկ սցենարներով ու ձևաչափով են մշտապես ներկայացել «Վերջին զանգի» արարողությանը՝ անմոռանալի ու տպավորիչ ելույթներով հիացնելով ուսուցիչներին, ծնողներին ու հյուրերին:

Ավա՜ղ, 2019-2020 ուստարվա ավարտը համաշխարհային համավարակի պայմաններում իր ձևաչափը թելադրեց. հեռավար դասերի ու առցանց շփումների ավարտը եզրափակվեց «Վերջին զանգ»-երի առցանց արարողությամբ՝ շրջանավարտների՝ ուսուցիչներին ուղղված երախտագիտության խոսքերն ու հուզումնալի ապրումները ներկայացնելով համացանցային հարթակում:

Այս տարի համալսարանական N 57 հիմնական դպրոցի 9-րդ դասարանն ավարտեց 25 աշակերտ, որից չորսը՝ Անժելիկա Աբգարյանը, Գոռ Կարապետյանը, Մհեր Ղարիբյանը և Էլեոնորա Սարգսյանը՝ գերազանցության վկայականներով:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը և դասղեկ Մելինե Միքայելյանը նույնքան հուզված են, որքան շրջանավարտները. անսովոր պայմաններում անցնող ավարտական միջոցառման ընթացքում նրանք իրենց սաներին մաղթում են հաջողություն և կյանքի փորձությունները հաղթահարելու կամք ու կորով:

Դպրոցի տնօրենը վստահեցնում է՝ թեև ավարտական միջոցառումն անցկացվեց առցանց, ինչպես վերջին ամիսների հեռավար դասերը, այնուամենայնիվ, նույնիսկ այդկերպ, նկատելի էր շրջանավարտների սրտի թրթիռը, հուզմունքն ու հրաժեշտի ջերմությունը:

«Այս տարի չափազանց դժվարին պայմաններում կայացավ հարազատ դպրոցին և ուսուցիչներին մնաք բարով ասելու վերջին պահն ու հնարավորությունը: Բայց մենք վստահ ենք, որ մեր սիրելի շրջանավարտներն ավելի ամրացած ու հավասարակշռված պիտի հաղթահարեն կյանքի բոլոր մարտահրավերները և առավել հաստատուն քայլերով շարունակեն իրենց ուղին: Որտեղ էլ շարունակեն՝ իրենց հետ տանելու են հարազատ կրթօջախի ջերմությունն ու ամբարած գիտելիքները, որոնք ուժ կտան՝ դրսևորվելու ցանկացած միջավայրում: Մաղթում եմ բոլորին բարի երթ և հաջողություններ»,- ասաց տնօրեն Նաիրա Տողանյանը:

Վարժարանի սաներից շատերը ուսումը կշարունակեն Մանկավարժականում

Հանրապետության հանրակրթական դպրոցների, այդ թվում նաև ՀՊՄՀ-ի Հենակետային վարժարանի շրջանավարտները դպրոցն ավարտում են բացառիկ իրավիճակում:

Վարժարանի 5՝ բնագիտամաթեմատիկական (ֆիզմաթ), մշակութային (նկարչություն), հումանիտար հոսքի անգլերեն, լրագրություն, հոգեբանություն ենթահոսքերում սովորում էին 122 աշակերտներ: Նրանք հուզված, բայց նաև հպարտությամբ հեռավար կերպով հրաժեշտ տվեցին իրենց ուսուցիչներին՝ խոստանալով միշտ բարձր պահել հարազատ դարձած դպրոցի պատիվը:

Վարժարանի սաների մի ստվար մասը հստակ որոշել է բարձրագույն կրթությունը շարունակել հարազատ դարձած համալսարանում՝ Գեղարվեստական կրթության, Կուլտուրայի, Բանասիրական, Օտար լեզուների, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Հատուկ կրթության ֆակուլտետներում: Ընտրությունը հստակ է, քանի որ վստահում են ուսման որակին, պրոֆեսորամանկավարժական կազմին: Հավաստում են՝ չէ՞ որ հենց այդ համալսարանն է իրենց տվել այսպիսի բանիմաց և հոգատար ուսուցիչներ: Նրանք վստահ են՝ դպրոցական կենսագրության ավարտին իրենք պատրաստ են նոր կյանք մտնել որպես հպարտ ու արժանապատիվ քաղաքացիներ:

Շրջանավարտները միակարծիք են՝ հիմա իրենք ավելի հասուն են, գիտակից՝ ուսուցիչների խորհուրդները հասկանալու, ընկալելու և դրանցով առաջնորդվելու համար:

Վարժարանն իր սաներով հպարտանալու առիթներ շատ է ունեցել: Այս տարի էլ վստահ է՝ նման առիթները շարունակական են լինելու:

Վստահում ենք մեր սաներին, հավատում ենք՝ նրանց շնորհիվ Մանկավարժական համալսարանը իր շարքերն է համալրելու արժանապատիվ քաղաքացիներով ու ընտրյալ մասնագետներով:

32-րդ «Վերջին զանգը»

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցն այս տարի նոր՝ հեռավար ձևաչափով անցկացրեց համադպրոցական տոնական միջոցառումը՝ 32-րդ «Վերջին զանգը»՝ նվիրված 2019-2020 ուսումնական տարվա ավարտին (սովորաբար այս տոնական միջոցառումն անց է կացվում Ռուսաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության հանդիսությունների գեղեցիկ դահլիճում):

Դպրոցի սաներն առցանց, բայց մեծ ոգևորությամբ ներկայացրին իրենց հետաքրքիր գրական ու երաժշտական ստեղծագործությունները և պարային համարները: Այդ ամենը հաջողությամբ իրականացվեց ուսուցչական կազմի՝ հայոց լեզվի ուսուցիչներ Շ. Փահլևանյանի և Ա. Հովհաննյանի, հայագիտության ուսուցչուհի Ք. Վարդանյանի, երաժշտության ուսուցչուհի Ա. Սամվելյանի, ժողովրդական պարերի ուսուցչուհի Ն. Ռաֆայելյանի, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ Ի. Շվեցովայի ջանքերով:

Ծնողներին և աշակերտներին իր շնորհավորական ու շնորհակալական հեռավար խոսքը հղեց դպրոցի տնօրեն մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանը՝ մաղթելով նրանց քաջ առողջություն, երկար տարիների կյանք, ուրախություն և բարեկեցություն, երջանիկ իրադարձություններ:



Մայիսի 22-ը Շառլ Ազնավուրի ծննդյան օրն է

Ես երիտասարդներին միշտ ասում եմ՝ մի եղեք շատ հպարտ, ընդամենը գործ արեք:

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ

ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ ՇՆՉՈՎ

«Դուք կնվաճեք աշխարհը, որովհետև կարողանում եք հուզել»: *Շառլ դը Գոլ*

Բանասեր: Բանը, այն է՝ խոսքը, սիրող մեր ֆակուլտետը, հավատարիմ բառի ստուգաբանական նշանակությանը, պահեց օրվա խորհուրդը՝ խոսքով խնկարկելով մեծն շանսոնիեի հիշատակը:

Շառլ Ազնավուրն իր մահկանացուն կնքել է 2018 թվականին, որից հետո յուրաքանչյուր մայիսի 22 ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետում նշանավորվում է որպես հարգանքի տուրքի մատուցման օր: Բայց այս անգամ պայմաններն այլ էին. չկար համալսարանը, չկային ծանոթ հայացքները, չկար մեր լուսավոր ճեմասրահը: Սակայն Googlemeet հարթակն իրեն այս անգամ էլ արդարացրեց. էկրանից այն կողմ մեր դասախոսներն էին, մեր ուսանողներն ու ընկերները, հենց այդ հայացքներն էին, որ հիշեցրին մեր բաղձալի առօրյան: Եվ ահա Բանասիրական ֆակուլտետն իր պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմով կազմ-պատրաստ սպասում էր՝ ունկնդիր լինելու սիրելի և հարգարժան դասախոսի ազնավուրյան «երգին»:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Ալելիտա Դոլուխանյանը «Գրական զրույց. Շառլ Ազնավուր» վիրտուալ ցերեկույթի շրջանակներում ներկայացրեց Ազնավուր հավերժական լեգենդին: Մենք՝ ուսանողներս, հաճույքով լսեցինք հետաքրքրաշարժ կենսագրական փաստերն ու հուշերը, սիրելի դասախոսի առաջնորդությամբ բացահայտեցինք Ազնավուր բանաստեղծին՝ ունկնդիր լինելով պրոֆեսորի կողմից իսկ հրատարակված և ցերեկույթին ընթերցվող բանաստեղծություններին: Կարևորեցինք և մեր հուշերում պահեցինք 12-ամյա Ազնավուրի մասին Միսաք Մանուշյանի կողմից արված այն դիտարկումը, թե Շառլը դառնալու է Ֆրանսիայի հանճարն ու Հայաստանի պատիվը: Կարծում եմ անվիճելի է վերը նշված կանխասացության ճշմարտացիությունը: Ի դեպ, գրական զրույցն իր մեկնարկը և ավարտը տվեց հայորդուն նվիրված երգով:

«Մենք ծնվել ենք, որպեսզի մեռնենք, սակայն մինչ այդ պետք է ապրել»,- ասել է մեծն շանսոնիեն: Գիտե՞ք՝ մեր սիրելի տիկին Դոլուխանյանն ապրեցնող դասախոս է:

Աննա ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, առկա ուսուցման բակալավր, 4-րդ կուրս

Համալսարան-դպրոց — Մեր շրջանավարտները

Բարի ու գեղեցիկ ավանդույթներով

Երևանի N 181 դպրոցը հիմնադրվել է 1982 թվականին: Ի սկզբանե դպրոցն ունեցել է բանիմաց և համախբված անձնակազմ: Կրթության այս օրրանը տարիների ընթացքում որդեգրել է բարի և գեղեցիկ ավանդույթներ, ունեցել բազում հաջողություններ, անվանի և հասարակությանը պիտանի շատ ու շատ սաներ:

2014 թվականին դպրոցում նոր ժամանակներին համապատասխան կրթության, նոր մոտեցումների ու ավանդույթների մեկնարկը տրվեց: Նորարարական շունչը դպրոց բերեց նորանշանակ տնօրեն Լիլիթ Արեյանը, ով ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետը: Ուսումնառության ընթացքում հայ ժողովրդի պատմության քառուղիներով անցած և ազգային արժեքները գնահատող տնօրենն անմիջապես ձեռնամուխ եղավ կրթության որակի բարելավման աշխատանքներին՝ դպրոցաշինությանը, ազգային արժեքների պահպանմանը, որոնց վկայությունն են բազմաթիվ ինքնատիպ և յուրօրինակ միջոցառումները, տոնական և հիշատակման օրերին նվիրված ֆլեշ-մոբերը:

Տնօրենի նախաձեռնությամբ և ուղղորդմամբ կատարվեցին բազմաթիվ համագործակցային աշխատանքներ՝ հրավիրվեցին բազմամասնագիտական խմբեր, որոնք կազմակերպեցին սեմինար-պարապմունքներ թե՞ աշակերների, թե՛ ուսուցիչների և թե՛ ծնողների համար: 2018-2019 ուսումնական տարում իրագործվեցին դպրոցաշինական գեղեցիկ մտահղացումները, և արդյունքում շունչ առան քիմիայի նորագույն տեխնոլոգիաներով հագեցած լաբորատորիան, ՆՁՊ-ի դասասենյակը, տեխնոլոգիայի դասասենյակները: Նմանատիպ աշխատանքները շարունակական են լինելու:

№ 181 դպրոցում մշտապես տիրող ջերմ ու հոգատար աշխատանքային մթնոլորտն ու համախմբվածությունը պարբերաբար կյանքի է կոչում նոր ու գեղեցիկ, մեկը մյուսից տարբերվող միջոցառումներ:

Ուսուցիչների անսահման նվիրումը և ստեղծագործ միտքը չընկճվեց անգամ մերօրյա արտակարգ դրության պայմաններում: Հետաքրքիր տեսադասեր, ֆլեշ-մոբեր կազմակերպվեցին նաև հեռավար ուսուցման հարթակում. պետք է առանձնացնել երաժշտության ուսուցչուհի Մարիետա Ադամյանի նախաձեռնած ֆլեշ-մոբը, որով առաջին դասարանցիները բարության, սիրո և համբերատարության կոչ ուղղեցին համայն աշխարհին:

Վաստակաշատ ուսուցչուհին, կարևորելով երաժշտության դերը երեխաների արժեհամակարգի, ճաշակի և աշխարհայացքի զարգացման գործում, մեկը մյուսից հետաքրքիր դասեր ու միջոցառումներ անցկացրեց: Վկա՝ տարեվերջյան ամփոփիչ հեռավար միջոցառումը, որը փաստեց՝ երեխաները չեն ընկճվել և իրենց կոչն են ուղղում համայն մարդկությանը՝ ժպիտով դիմագրավել փորձություններին: Փոքրիկները մեծ սիրով և ոգևորությամբ մասնակցեցին միջոցառմանը, որն արժանացավ բոլորի հավանությանը:

Ուսուցիչը մեր շրջանավարտն է

Սահմանամերձ Տավուշում

Ողջ աշխարհը և մենք բոլորս դժվարին ժամանակներ ենք ապրում: Այս իրավիճակից ամենաշատը տուժեցին մեր երեխաները, ովքեր հայտնվեցին մեկուսացման մեջ և զրկվեցին հասակակիցների հետ շփվելու հնարավորությունից: Հաշվի առնելով նրանց առօրյան ներխուժած սթրեսածին երևույթները հաղթահարելու փաստը՝ հարկ եղավ երեխաներին բացատրել, թե ինչ է արտակարգ դրությունը, ինչու են նրանք տանը և ինչու չեն գնում մանկապարտեզ, և որ հիմա և՛ մեծերը, և՛ փոքրերը մնում են տանը, որ առողջ լինեն:

Այս իրավիճակը թե՛ ամբողջ աշխարհի, թե՛ Հայաստանի կրթական համակարգի համար դարձավ իսկական մարտահրավեր:

Ես Մանկավարժական համալսարանի շրջանավարտ եմ, աշխատում եմ Իջևան քաղաքում գտնվող «Մանուկների մոլորակ» զարգացման կենտրոնում որպես ավագ խմբի դաստիարակ: Այն նախադպրոցական հաստատություն է, որը որդեգրել է մի սկզբունք՝ բացահայտել երեխայի կարողությունները և զարգացնել դրանք: Այս նպատակով մեր զարգացման կենտրոնը համագործակցում է տարբեր մշակութային կենտրոնների հետ, այդ թվում՝ Երևանի պետական թատրոնների հետ: Սահմանամերձ Տավուշի երեխաները և՛ ֆինանսական, և՛ հեռավորության պատճառով միշտ չէ, որ կարողանում են այցելել թատրոն: Կենտրոնի տնօրինությունը երեխաների համար պարբերաբար կազմակերպում է ներկայացումների դիտում տարբեր թատրոններում, ինքն էլ հոգում է ծախսերը:

Խրախուսելու համար երեխաների հետաքրքրությունն ու սերը թատրոնի նկատմամբ՝ «Մանուկների մոլորակ» զարգացման կենտրոնը սկսեց համագործակցել «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնի կոլեկտիվի հետ: Պարբերաբար անցկացվող թատերական դասերը թատրոնի արտիստների կողմից նպատակ ունեին բացահայտել տաղանդավոր երեխաներին, ինչպես նաև նրանց մեջ սեր արթնացնել դեպի թատրոնը:

Այդ պատասխանատու գործը ստանձնեց թատրոնի դերասանուհի Անուշիկ Մելիքբեկյանը, ով շատ կարճ ժամանակահատվածում օգնեց մեր սաներին՝ հանդես գալու իրենց ներկայացումներով: Որոշվեց զարգացման կենտրոնին կից բացել թատերական ստուդիա:

Համավարակի ընթացքում երեխաների համար այնքան կարևոր և պարտադիր կրթության ընթացքում բացթողումներ չունենալու համար մեր զարգացման կենտրոնը նույնպես սկսեց պարապմունքներն իրականացնել հեռավար ռեժիմով: Հեռավար ուսուցումը ճիշտ կազմակերպելու գործում ինձ օգնության հասավ հարազատ բուհում՝ Մանկավարժական համալսարանում իմ պաշտպանած մագիստրոսական աշխատանքի թեման՝ «Էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների կիրառման անհրաժեշտությունը տարրական դպրոցում»:

Մեկ տարի առաջ, աշխատանքը գրելիս, քաջ գիտակցում էի թեմայի արդիականությունը, բայց չէի պատկերացնում կիրառման պահանջն ու անհրաժեշտությունը: Իսկ հիմա իմ ստացած գիտելիքների շնորհիվ կարողանում եմ ճիշտ կազմակերպել հեռավար ուսուցումը սաների հետ: Մինչ այս իրավիճակը, մենք բոլորս էլ գիտեինք, որ համակարգիչը մեր երեխաների առօրյայում մեծ դեր ունի խաղային նպատակով: Եվ հիմա յուրաքանչյուր մանկավարժի առաջ դրված է մեկ կարևոր հարց, որ երեխան կարողանա և ցանկանա համակարգիչն օգտագործել ուսումնական ռեսուրսների կիրառման նպատակով:

Դասընթացները կազմակերպելու ժամանակ ջանում էի, որ սաներս ձգտեն համակերպվել հեռավար ուսուցմանը, միևնույն ժամանակ չվնասեն իրենց առողջությունը: Չէ՞ որ համակարգչի առջև երկար նստելը վտանգավոր է առողջության համար. այդ տարիքում ձևավորվում է երեխայի հենաշարժողական համակարգը և շատ կարևոր է համակարգչի առջև ճիշտ նստելը, մարմնի դիրքը, աչքերի և համակարգչային էկրանի հեռավորությունը (50 սմ):

Բայց այս դժվարությունները չխանգարեցին մեզ կազմակերպել հետաքրքիր և բովանդակալից դասեր: Որպես նախադպրոցական խմբի դաստիարակ ես մեծ պատասխանատվություն եմ կրում՝ ապահովելու նրանց սահուն անցումը դեպի տարրական դպրոց: Եվ ես դրա համար ջանք ու եռանդ չեմ խնայի, որպեսզի իմ սաները ինքնավստահ մտնեն դպրոց:

Կենտրոնը վերաբացվել է, և աշխատում ենք՝ պահպանելով բոլոր սանիտարահիգենիկ պայմանները:

Այս իրավիճակը ցույց տվեց, որ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացման լուրջ խնդիր կա: Պետք է զբաղվել դրանով՝ ստեղծված նման իրավիճակներից պատվով դուրս գալու համար:

Քրիստինե ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՊՄՀ շրջանավարտ

Ու ավարտվեց մանկությունս...

...Աչքիս առջև է մորս հպարտ, ձիգ կեցվածքը, որը մինչև խոր ծերություն չփոխվեց. նա չկռացավ ուրիշ ծեր կանանց նման, մազերը չթափվեցին, դեմքի վարդագույն ճերմակը զարմացնում էր բոլորիս:

Մայրս ուներ մուգ կապույտ մետաքսե մի զգեստ՝ կաթնագույն ծաղիկներով: Այդ զգեստը նրան շատ էր վայելում: Երբ քայլում էր այդ հագուստով, հարևանները հիացած նրա ետևից նայում էին, ու մայրս այդ զգում էր:

...Ասում են մայրս դեղձան մազեր է ունեցել: Մորս խաժ աչքերը, ճերմակ մաշկը և ազնվական կեցվածքը պահպանվել էին, բայց մորս ես միայն հիշում եմ ճերմակ, փարթամ, առողջ մազերով:

Երբ ես ծնվեցի, մայրս 39 տարեկան էր, բնականաբար, ես նրան հիշում եմ 3-4 տարեկանից. 42-43 տարեկանում մայրս արդեն ճերմակել էր, ու մազերը չէր ներկում:

Հիշում եմ, թե ինչպես մի օր, երբ մանկապարտեզի բոլոր երեխաների մամաները եկել էին՝ իրենց զավակներին տուն տանելու. նրանք բոլորը երիտասարդ էին, թռվռուն: Հանկարծ փոքրիկներից մեկը վազեց դեպի ինձ և ձայն տվեց.

-Ջուլիետա՜, տատիկդ եկավ:

Ես սառեցի. տատիկ չունեի: Վազեցի դեպի խմբասենյակի դուռը ու տեսա... ճերմակահեր մայրկս էր: Աչքերիս առջև սևացավ, ու ես ճչացի.

- Չե՛մ գալիս, գնա՛:

Ամբողջ ճանապարհին ես ու մայրս լուռ քայլում էինք: Ինձ թվաց՝ մայրս լուռ արտասվում է: Հետո նա շատ քնքուշ ինձ հարցրեց.

- Բալա՛ս, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ այդպես ճչացիր: Ես լռեցի ու ամուր փարվեցի մայրիկիս ծնկներին, հետագայում որքան հիշում էի, այնքան մեղքի զգացումը խորանում էր, սիրտս ճմլվում, ու տարիների ընթացքում այդ հիշողությունը դառնանում է:

Մայրս այդ մասին այլևս հարց չտվեց, բայց ինձ վերցնելու համար միշտ մանկապարտեզ էր ուղարկում եղբորս՝ Էդուարդին կամ քրոջս՝ Լենային:

Շատ տարիներ հետո մայրս մի օր անսպասելի հարցրեց.

- Դու հիշո՞ւմ ես, որ մի օր, երբ եկել էի քեզ մանկապարտեզից տուն տանելու, ինձ տեսնելուն պես ճչացիր: Ի՞նչ էր պատահել: Գիտե՞ս՝ ինձ համար ինչ բավականություն էր, հոգեկան արժեք, որ ես գալիս էի քեզ վերցնելու: Ախր դա իմ վարդագույն երազանքներից մեկն էր:

Ես, անշուշտ, անմիջապես հիշեցի այդ օրը, նեղվեցի. ախր իմ ընկերներին մանկապարտեզից վերցնելու եկող բոլոր մամաները երիտասարդ էին, թռվռուն, իսկ իմ մայրիկը՝ ճերմակահեր:

- Մա՛մ ջան, չեմ հիշում,- ստեցի ես,- ի՞նչ իմանամ, փոքր եմ եղել, մի հիմար բան եմ արել էլի:

Մայրս ինձ գրկեց ու տխուր տոնով ասաց.

- Դու ուզում էիր, որ ես ջահել լինեի, այնպես չէ՞: Ես երբեք ջահել չեմ եղել, ես էլ չեմ հիշում իմ մանկությունն ու ջահելությունը: Ես դեռ տիկնիկով խաղում էի, երբ մանկատունն ինձ ամուսնացրեց, ու ավարտվեց մանկությունս...

Ես փարվեցի մորս ու հոնգուր-հոնգուր հեկեկացի:

Ամեն անգամ, երբ իմ ճտպտան ու աշխույժ աղջկան՝ Լուսինեիս մանկապատեզից տուն էի տանում (ի դեպ, դրանք իմ կյանքի երջանիկ օրերից են), սրտի կսկիծով էի հիշում մայրիկիս ասված խոսքերը, ու խիղճս տանջում էր...

Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ
Հատված «Էրգրից քշվածները» գրքից

Ծերուկ Խոտտաբիչ

Մայրս ուսուցչուհի է, հայրս՝ զինվորական: Ու հենց սա է հիմքն ու շարժառիթը, որ Ծերուկ Խոտտաբիչ հայտնի խանութի կողքին գտնվող մանկապարտեզ ես այցելում էի ամեն օր: Փշատի համն ունի իմ մանկապարտեզը, այսօր էլ հիշում եմ մեր դայակ-դաստիարակների տեսքը, որ սպասում էին մինչև ինձ տուն տանեին, հաճախ՝ հագած-կապած, մանկապարտեզի գունավոր դարպասի մոտ կանգնած: Կարգապահության հասնելու և հասցնելու ձգտումը հիմա ինձ մի քիչ չափազանց է թվում: Ճաշի մատուցումը արարողություն էր, գրեթե ծիսակարգ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ կանգնած էին չորս զգաստ փոքրիկներ, որոնք նայում էին սեղանի կենտրոնում տեղավորված հացի ընդհանուր ափսեին, որի մեջ հացը կանոնիկ, հավասարաչափ էր դասավորված: Ձեռքերը՝ պարտադիր լվացած, հերթը բարի՜ ախորժակ-շնորհակալությո՜ւն՝ չէ՜ շնո՜րհա՜-կա՜-լո՜ւ-թյո՜ւն՝ հավասար, միասի՜ն ասելունն էր: Թվում էր միայն աղոթքն է պակասում: Թեև արդեն մեծ էի ու հե՜նց մեծերի խումբ էի հաճախում, իմ գերուշադիր մոր խնդրանքով պարտադիր ցերեկային քնի ժամերին միանում էի փոքրերի խմբին, որովհետև մեծերը չէին քնում ցերեկը, մենք տառե՜րն էինք սովորում: Ստվարաթղթերի վրա խնամքով սոսնձած տառերը թվում է՝ երբեք չեմ մոռանալու: *Ա* տառի կողքին արևի նկարը՝ պատկերավո՜ր, *Մ* տառի կողքին՝ սկյուռը: Մանկապարտեզում, ու հետո պարզվեց նաև դպրոցում, խմբակային նկարվելու ավանդույթ կար: Կարծում եմ՝ սա ավելի շատ մայրերի ու տան հյուրերի համար էր պարտադիր, քան երեխաների: Լուսանկարվում էինք երեք շարքով՝ առաջին շարքը նստում էր, երկրորդը՝ համեմատաբար ավելի բարձրահասակները, կանգնում էին, իսկ երկրորդ շարքի մեջտեղում հանդիսավոր կանգնում էին մանկապարտեզի տնօրենը և դաստիարակները: Երրորդ շարքը՝ ամենաբարձրահասակները, կանգնում էին նստարանի վրա, որ էլ ավելի ընդգծեին իրենց հասակը:

Մանկապարտեզում փոքրամարմին էի, առաջին շարքում էի նստում՝ գանգո՜ւրգանգո՜ւր մազերով: Հետո պիտի հասկանայի, որ սա այնքան էլ կյանքիս մեծագույն թերությունը չի: Բայց մանկապարտեզում աղջիկներից մի քանիսի մազերը շեկ էին, բարակ, ու ինձ թվում էր՝ այդպես պիտի լինի, ասել է թե՝ ձևն է այդպես: Մանկական «բարդույթները» չհաղթահարվեցին դպրոց գնալուց հետո էլ՝ առաջին դասարանում: Այն կարմիր գրքում (որի վրա գրված է «Առաջին քայլեր» ու, որը բոլորս ունեինք) ես արդեն ավելի բարձրահասակ էի (իբր) և ուսուցչուհուս կողքին էի կանգնում կամ կողքին: Այստեղ էլ դուք կարող եք հանդիպել իմ գանգուր-գանգուր վարսերին, որոնք անարդյունք փորձել էին հավաքել սպիտակ, մեծ մազակալներով: Իմ վարսերին հաղթել կլինի՞:

Դաստիարակ-ուսուցիչ-դասախոս կերպարների կարևորությունն ինձ համար երևի հենց մանկապարտեզից սկսվեց: Սա է պատճառը, որ ավարտել-գնալուց հետո ընտրած, գտած մանկավարժների խոսքով ու հայացքով եմ կառուցում օրերս: Ո՞նց չկարևորել քեզ սովորեցնողին, սնուցողին: Հետո ապշում էի դպրոցը չկարևորող աշակերտ, համալսարանը երկրորդական դարձրած ուսանող տեսնելիս:

Մի դասարանի ավագին հարցրի, թե պատասխանատու է, չէ՞ ավագ լինելը, ասա.

- Դպրոցի դուռը փակում եմ ու վերջ, օրս դրանով չեմ լցնում:

Դուռը շրխկացնելը կարծում եմ հեշտ է շատ: Դուռը ներսից կողպել, զրուցել, պարզել, հակադիր կարծիքները քննարկել, ընդհանուր հայտարարի գալ կամ չգալ ու լսել, շատ լսել, լսել ժպտալով ու խոժոռվելով պատմածից, չսպասել խոսելու անձնական հերթին, իսկապես լռած լսել, սիրել, սիրել, սիրե՜լ այն գործը, որ անում ես ամեն օր, որը ստիպում է հագնել ցավեցնող կոշիկն ու սիրո՜վ հասնել աշխատավայր. այ սա ուժեղների գործն է (դասղեկս է սովորեցրել):

Մանկապարտեզում մենք հստակ սովորում էինք շարք կանգնել, հերթով բարձրանալ սահարանի աստիճաններին, հերթո՜վ: Միայն քաղաքակիրթ հերթ կանգնելու, հերթ պահելու համար արժեր մանկապարտեզ գնալ: Երևի հրմշտողները Ծերուկ Խոտտաբիչ խանութի կողքին գտնվող գունավոր դարպասով մանկապարտեզի մասին չգիտեն, հա՞:

Տաթև ԹԱՄՐԱԶՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 1-ին կուրս

ՕՐԱՑՈՒՅՑԻՍ ԹԵՐԹՎԱԾ, ԲԱՅՑ ՉՊՈԿՎԱԾ ՄԻ ԷՋ...

Կյանքի յուրաքանչյուր շրջան իր նշանակալի դերն է ունենում անհատի կայացման, բարոյական սկզբունքների հաստատման և ներուժի բացահայտման գործում:

Մանկությունն անձի ձևավորման, հոգեբանական զարգացման, ինքնահիկման անվերջ ուղու սկզբնակետն է: Այս փուլում դրվում են աշխարհայացքի հիմքերը, կառուցվում է արժեհամակարգ տանող սանդուղքի առաջին աստիճանը, որով նա բարձրանալու է դեպի կատարելագործում:

Մանուկ հասակում ձեռք են բերվում շատ կենսական կարողություններ, ուրվագծվում ապագայի երազանքները: Այդ էտապում սովորում են ինքնաճանաչման, շրջապատող իրականության ընկալման և վերլուծական հմտություններ: Նրանց մատչելի է դառնում մայրենի լեզվի գանձարանը, ազգային արժեքների ոգին: Իրերի էությունը երևում է մանկական անմեղ դիտակետից. նրանք դեռ չեն հասկանում բառերի երկիմաստությունը, չեն զանազանում կեղծավորության դիմակները, նրանց խորթ է անտարբերության սառնարյուն օտարականը:

Մանկության արևը գարուն է սփռում՝ աներկբա հավատի, անսպառ խնդության, չճանաչված պատրանքների շողերով:

Մանկապարտեզում նրանք ստանում են հանրային կյանքի առաջին տպավորությունները, ծանոթանում կարգապահության տարրական սկզբունքներին՝ միաժամանակ ապրելով լուսե հեքիաթում:

Դպրոցական տարիները գիտելիքների ամբարման և ինքնազարգացման մի շրջան են: Այս տարիքում ընդլայնվում են մտահորիզոնի սահմանները, ավելի պարզորոշ են երևում կյանքի ուղիները: Այդ կարևոր գործում մեծ է մանկավարժի դերը: Ուսուցիչն այն անձն է, ով բացահայտում է աշակերտների ձգտումները, սերմանում է նրանց մեջ սեփական ուժերին հավատալու քաջություն, օգնում վերծանել խրթին հարցերի առեղծվածները: Նա ստանձնում է մաշտոցյան ավանդները սերունդներին փոխանցելու գործը, հայրենատենչ ոգով կրթում ապագա զինվորներին:

Ժամանակն աննահանջ հաղթող է: Նա իշխում է այն ամենին, ինչն ազգակից չէ հավերժությանը: Թեպետ ժամանակն անխնա գահակալ է, նրա խղճմտանքի լամպը լույսի փշրանքներ է նվիրում մարդկանց՝ հուշերի տեսքով: Մանկության հուշերը, որպես անթառամ ծաղիկներ, զարդարում են մեր կարոտի այգիները. այնտեղ կարկաչում են ծիծաղի առուները, ծաղկում են հույսի ծառերը, երգում՝ բերկրության թռչունները... Երկինքը ճախրելու պատգամ է ձոնում ներքև կանգնածին:

Տարիներ են անցել այն երանելի օրերից, երբ վազվզում էի անհոգ խաղերի ու բնության հրաշքների գունեղ աշխարհում:

Մանկությունս նավարկել է ժամանակի գետով. անդարձության ափն է մեզ բաժանողը:

Ձմրուխտ օրերի երազը դարձել է օրացույցիս թերթված, բայց չպոկված մի էջ:

Ամալյա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, հեռակա 4-րդ կուրս

Հեծանիվը

Այդ շենքի նոր բնակիչն ամեն երեկո իր հեծանիվը կանգնեցնում էր մուտքի մոտ՝ չանհանգստանալով, որ կարող են այն գողանալ:

Հարևանի երեխան, ամեն առավոտ, երբ դեռ բոլորը քնած էին, վերցնում էր հեծանիվն ու մի քանի պտույտ անում թաղերով: Հետո նորից բերում էր հեծանիվն ու կանգնեցնում նույն տեղում, խնամքով շոյում անիվներն ու վազում փողոց՝ կարկանդակներ վաճառելու:

Երբ դեռ բոլորը քնած էին, հեծանիվի տերը պատուհանից թաքուն հետևում էր տղային, որն այնքան շատ էր ուզում հեծանիվ ունենալ և չգնալ աշխատանքի, բայց նա ամեն օր գնում էր աշխատանքի ոտքով:

Հարևանն ամեն օր հեծանիվը կանգնեցնում էր շենքի մուտքի մոտ՝ չանհանգստանալով, որ կգողանան...

ՕՖԵԼԻ ԴԱԼԼԱԲՅԱՆ

«ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»



Լույս է տեսել «Լեզվաբանական տերմինաբանության հարցեր» խորագրով ժողովածուն (Պրակ Ա), որն ամփոփում է 2019 թ. հոկտեմբերին Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում կայացած հանրապետական գիտաժողովի նյութերը:

Գիտաժողովը նախաձեռնել է ՀՊՄՀ-ում գործող Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիան (վարիչ՝ պրոֆ. Լ. Խաչատրյան), իսկ ժողովածուն տպագրվել է ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Ժողովածուի լույսընծայումը նախապատրաստել է խմբագրական խորհուրդը հետևյալ կազմով՝ Ռուբեն Միրզախանյան՝ պ.գ.դ. (խորհրդի նախագահ), Լալիկ Խաչատրյան՝ բ.գ.դ. (գլխավոր խմբագիր), Հռիփսիմե Թորոսյան (պատասխանատու քարտուղար), Սրբուհի Գևորգյան՝ հ.գ.դ., Կամո Վարդանյան՝ հ.գ.դ., Դավիթ Գյուրջինյան՝ բ.գ.թ., Կարինե Աբրահամյան՝ բ.գ.դ., Աննա Աբաջյան՝ բ.գ.դ., Ջուլիետա Գյուլամիրյան՝ մ.գ.դ., Լուսինե Մարգարյան՝ բ.գ.թ.:

Ժողովածուում զետեղված հոդվածները վերաբերում են լեզվաբանական տերմինաբանության տարաբնույթ հարցերի՝ հոլովական համակարգի տերմինաբանություն (Ա. Աբաջյան), տերմինաբանության արդի խնդիրներ (Կ. Աբրահամյան), «Լեզվաքաղաքականություն» եզրույթի բնութագիր (Դ. Գյուրջինյան), երկլեզվության ուսմունքի և միջմշակութային հաղորդակցության տերմինաբանություն (Ի. Սարգսյան), նոր բառ-եզրույթներ մայրենիի դասավանդման մեթոդիկայում (Ջ. Գյուլամիրյան), լեզվաբանական տերմինների աստիճանակարգություն (Լ. Խաչատրյան, Մ. Միրումյան), գոյականական դարձվածային միավորների ներկապակցական հարաբերությունների տիպեր (Գ. Խալաթյան), հայերեն լեզվաբանական տերմինների համակարգ (Մ. Միրումյան), տերմինային բազմիմաստություն (Վ. Պետրոսյան), տեքստաբանական տերմիններ (Ա. Ավագյան), հուշագրության լեզվական տերմինային համակարգ (Ա. Գալստյան), օտարալեզու եզրույթների թարգմանության սկզբունքներ (Հովի. Ջաքարյան, Հ. Սուքիասյան), Արցախի տեղանվանագիտության տերմիններ (Լ. Մարգարյան), ձևային գոյաբանությունը որպես հասկացությունների դասակարգման գործիք բնական լեզվի մշակման համակարգերում (Մ. Յավրումյան, Ա. Դանիելյան), պարսկերենի բայական համակարգի հոմանշային տերմիններ (Հ. Թորոսյան), տերմինային բազմիմաստություն Ղարաբաղի բարբառի կազմախոսական դարձվածքներում (Ա. Արզումանյան):

Հրապարակված հոդվածներն ունեն գիտագործնական արժեք և կարող են նպաստել հումանիտար ֆակուլտետի ուսանողների ավարտական և մագիստրոսական թեզերի կազմակերպմանը, ինչպես նաև կարող են հետազոտական աշխատանքների նոր ուղիներ բացել ուսանողների և մագիստրոսների համար:

ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երր նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ... Ամեն բան, ինչ որ շրջապատում է նրան, ինչ որ գոյություն ունի աշխարհքում, սնունդ է նրա համար :

Երբ որ գարշելով տեսնում եմ շուրջս
Մոլեգնած կյանքի պատկերը ցավոտ,
Հաճախ, մանկությո՛ւն, խռոված հոգուս
Ներկայանում ես ինչպես առավոտ:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Եթե ինձ հարցնեին՝ ո՞րն է մանկական գրողի կոչման առանձնահատկությունը, կասեի՝ զարմանալու հատկությունը: Մարդը պետք է բոլոր տարիքներում չկորցնի զարմանալու, սիրելու արժանիքը, այլապես նա կդառնա անտարբեր ու չի կարող մանկան նման մաքուր, զարմացած, գեղեցիկ աչքերով նայել կյանքին, մարդկանց:

Սուրեն ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երկար ժամանակ, մինչև այսօր էլ, ես չեմ ազատագրվել իմ մանկության տպավորություններից: Եվ ոչ էլ ցանկանում եմ ազատագրվել. կամավոր ու քաղցր գերության պես մի վիճակ է: Տարիներ առաջ, երբ առիթ էր լինում այս մասին խոսելու, մանկության տպավորություններիս կուտակումը համարձակորեն նմանեցնում էի ջրհորին, որից որքան էլ ջուր դուրս քաշեիր՝ չէր ցամաքի:

Ռուբեն ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԸՆՏԱՆԻՔ. ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ ԲԱՆԱՁԵՎԸ

1950 թվականից սկսած աշխարհում նշում են երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, իսկ 2012 թվականից՝ Ծնողների համաշխարհային օրը:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցն ամեն տարի հունիսի 1-ին ավանդաբար կազմակերպում է բաց դասեր և թեմատիկ միջոցառումներ՝ նվիրված վերոհիշյալ տոներին: Հայտնի պատճառով այս տարի այն անցկացվեց առցանց ձևաչափով:

Դպրոցի անձնակազմը և ղեկավարությունը դպրոցականների համար նորովի արժևորեցին ծնողների և ընտանիքի առանցքային դերը աճող սերնդի դաստիարակության և պաշտպանության գործում՝ ընդգծելով ընտանեկան խնամակալության և ծնողական ջերմության արժեքը երեխայի անձի ներդաշնակ և համակողմանի զարգացման գործում: Այս օրերի հետ կապված, դպրոցական պարապմունքների անցկացման ընթացքում, հատկապես կարևորվում է ծնողական սերը, հոգատարությունն ու ուշադրությունը, ինչպես նաև մտերիմ մարդկանց աջակցությունը: Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա և Ծնողների համաշխարհային օրվա առթիվ կազմակերպված թեմատիկ դասերին հնչեցին բարեմաղթանքներ. երեխաները ընտանիքներին մաղթեցին երջանիկ ժպիտներ, ուրախ իրադարձություններ և ջերմություն, որ սերնդեսերունդ փոխանցվեն բարեխղճության, բանականության և արդարության արժեքները, իշխեն կարեկցանքը, փոխըմբռնումն ու վստահությունը:

Ստեղծված իրավիճակի թելադրանքով այս տարի ժամանակակից տարբեր տեխնոլոգիաների օգնությամբ առցանց ձևաչափով «Վերածնունդ» դպրոցի յուրաքանչյուր սան յուրօրինակ ձևով ներկայացրեց իր անկրկնելի ու հրաշալի ընտանիքում իր անհոգ և երջանիկ մանկության բանաձևը:

Մոսկվա-Երևան

Չմեծացող այդ փոքրիկը՝ մանկությունը

Օրերի մեջ ու օրերի հետ մենք մեծանում ենք, բայց հոգու մի կտորով ու գուցե ամբողջ սրտով մնում ենք երեխա... Մանկությունն է՝ չմեծացող, բայց և մեծանալուց չվախեցող այդ փոքրիկը, որի մասին միշտ հիշում ենք՝ հետ բերելու ցանկությամբ: Այդ ամենասրտոտ պարզությունն ասես ապրում է բոլորիս հոգիներում՝ հիշեցնելու համար, որ կյանքի մեր դժվարունակ ուղին մենք նախ հեքիաթով ենք սկսել: Երբեք չավարտվող այդ հեքիաթը երեկ մեր կյանքն էր, իսկ այսօր մեր կյանքը կարգավորող շարժիչը: Ամեն օր մեր ձեռքը բռնող այդ փոքրիկը մեզ սովորեցնում է՝ ինչպես սիրել մարդուն այնպես, որ չլինեն մարդուն կործանող իրողություններ, ինչպես կարգավորել մեր ներաշխարհը, որ շրջապատող աշխարհը տեսնենք բարության ու խաղաղության տիրույթներում, ինչպես հորինել տարբեր ինչպեսներ՝ ապրելու համար սրտի ամբողջ թրթիռով:

Բայց շատ հաճախ մեր ներսի այդ փոքրիկը խեղճանում է, կծկվում, լաց լինում, սպառվում, իսկ դա լինում է այն ժամանակ, երբ մերօրյա իրականության բեռը շատ ճնշող է լինում ու զարմանալի համառությամբ հենց այդտեղ է, որ անմիջապես ծնվում է կարծես փրկող միտքը՝ «երանի՜ փոքրիկ լինեի» կամ «երանի՜ փոքրիկներին», ու դարձյալ զարմանալի արագությամբ հազարաթև այդ թռչունը՝ մանկությունը, տակնուվրա է անում մեր մտքերը՝ տակից վեր հանելու համար այն ուժերը, որոնք կստիպեն հաղթահարել դժվարությունը... Ու հասկանում ենք, որ դեռ շատ բան ունենք սովորելու, որ մեր մեջ ու մեզնից դուրս «կռիվները» շատ են լինելու, իսկ մանկությունը մեկն է ու միակը, այնպես, ինչպես սերերը շատ են ու տարբեր, բայց սիրտը՝ մեկը... Ինձ մոտ գտնվող այդ հեռուն որքա՜ն գեղեցիկ է ու որքա՜ն իմը... ա՜խ, այդ մանկությունը, որը պատրաստ է ամեն անգամ ծնվել մորս՝ ինձ նայող աչքերում, հորս ժպտացող ձայնում...

Մանկության հեքիաթը շա՜տ մեծ է միայն պատմելու համար, այն պիտի ապրեցնել, ապրեցնել նոր ձևի մեջ, բայց ապրեցնել... նրանում եղած բարությունը կփրկի մեր ներսի ու մեզ շրջապատող աշխարհը...

Մանկությունը մի հրաշալի հատկանիշ ունի՝ կառուցվող լինելու հատկանիշը, այո՛, մեր ապրած մանկությունը մենք ամեն պահի կարող ենք վերակառուցել ամեն փոքրիկի հետ, ամեն փոքրիկի միջոցով: Եվ, վերջապես, եթե երեխային մոտենալու



պատասխանատվություն ենք ստանձնում, մենք պատրաստ պիտի լինենք նրանից սովորել... Մենք իրարից սովորելով պիտի ավելի սիրենք իրար, ու իրար սիրելով պիտի սովորեցնենք իրար ավելին, քան սիրելն է, ու «փոխադարձը» ամենակարևոր բառերից է սիրելու ու սովորելու ճանապարհին՝ սկիզբ ու վերջ չունեցող համբերատարությամբ: Միայն այդպիսի համբերատարությամբ կարելի է խոսել ծաղիկների հետ այնպիսի վստահությամբ, որ նրանք էլ քեզ հետ խոսեն՝ պարզապես ծաղկելու լեզվով... Մանկությունը՝ ծաղկերենով աշխարհի հետ խոսող այդ անկրկնելին, ու եթե աշխարհն անգամ չհասկանա ու աշխարհին խորթ լինի այդ լեզուն, մեկ է ինքը չի ընկճվելու, իր բնույթն է ծաղկելը՝ թեկուզև առանց գիտակցելու, որ հանդուրժում է շրջապատող հանելուկային աշխարհի ինչ-ինչ վերապահումներ, ու այնուամենայնիվ, այդ աշխարհը հիանալու է նրա բույրով, բնականությամբ ու գեղեցկությամբ. այսպիսին է մանկությունը՝ միշտ կա, կա որպես անբացատրելի զգացողություն՝ չնայած աշխարհը չճանաչելուն՝ նրան տրվելու ինքնատիպ ցանկությամբ, երեխայական մաքրությամբ:

Հին ու նոր բարեկամս՝ մանկությունս, որը մնացել է տարիների հեռվում, բայց մոտենում է ամեն անգամ, երբ որևէ երեխայի հետ եմ խոսում, որովհետև ես նրա հետ խոսում եմ իմ մեջ ամփոփված երեխայի ձայնով, նրան տեսնում եմ իմ մեջ եղած երեխայի աչքերով ու նրա հետ իրերին նայում եմ մի տեսողությամբ՝ սրտի:

Հասմիկ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏԵՂԵՐԻ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՓԵՐԻ

Ծածկագիրը	Բուհը, կրթական ծրագիրը	Ընդունելության մրցութային քննությունները	Ընդունելության մրցութային աստղանիշով (*) մրցութային առարկաները		Ընդունելության տեղ/այդ թվում անվճար	այդ թվում բզ	այդ թվում նպտ.	վճարովի ԱՏ	ուսման վարձը հազ. դ
1	2	3	4	5	6	7	8	9	10
11	**Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**				**85**			**1494**	
148	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ) * կամ Օտլ(գ)*		2			23	480
149	Սոցիալական մանկավարժություն	Հլգ(գ)	Մ(գ) * կամ Օտլ(գ)*		2			35	390
150	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ) * կամ Օտլ(գ)*		2			60	580
151	Սուրդոմանկավարժություն	Հլգ(գ)	Կ(գ)*		2			23	350
152	Տիֆլոմանկավարժություն	Հլգ(գ)	Կ(գ)*		2			23	350
153	Օլիգոֆրենոմանկավարժություն	Հլգ(գ)	Կ(գ)*		1			23	350
154	Լոգոպեդիա	Հլգ(գ)	Կ(գ)*		2			45	460
155	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)			3			70	390
156	Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ) * կամ Ֆ(գ)*		4			21	360
157	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	Հլգ(գ)	Մ(գ)*		3			30	360
158	Ինֆորմատիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ) * կամ Մ(գ)*		2			35	430
159	Մաթեմատիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ) * կամ Մ(գ)*		4			50	360
160	Քիմիա	Քիմ(գ)	Մ(գ) * կամ Ֆ(գ)*		3			18	360
161	Կենսաբանություն	Կ(գ)	Քիմ(գ) * կամ Ֆ(գ)*		3			32	390
162	Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)*		4			35	390
163	Պատմություն	ՀՊ(գ)	Օտլ(գ) * կամ ԸՊ(գ)*		5			85	410
164	Կերպարվեստ**	Գծն			3			60	520
165	Երաժշտական կրթություն**	ԵՏՍ(գ,բ)			3			35	490

աստղանիշով (*) մրցութային առարկաներ- մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի աղյուսակների երրորդ սյունակում նշված տվյալ մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցութային քննության հավասար միավորների դեպքում առավելությունը կտրվի աստղանիշով (*) մեկ առարկայի դեպքում ավարտական փաստաթղթում առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին, իսկ աստղանիշով (*) մեկից ավելի առարկաների դեպքում՝ այդ առարկաների գնահատականների առավել բարձր միջին թվաբանական միավորներ ունեցող դիմորդներին.

** - Մասնագիտություններ (կրթական ծրագրեր), որոնց համար սահմանված են ներբուհական քննություններ

*** - ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն

Ծածկագիրը	Բուհը, կրթական ծրագիրը	Ընդունելության մրցութային քննությունները	Ընդունելության մրցութային աստղանիշով (*) մրցութային առարկաները		Ընդունելության տեղ/այդ թվում անվճար	այդ թվում բզ	այդ թվում նպտ.	վճարովի ԱՏ	ուսման վարձը հազ. դ
1	2	3	4	5	6	7	8	9	10
166	Պարարվեստ**	Դպար			3			47	650
167	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)			2			73	460
168	Գերմաներեն լեզու և գրականություն	Գլ(գ)			1			14	410
169	Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)			2			40	350
170	Հասարակագիտություն	ՀՊ(գ)	Օտլ(գ) * կամ ԸՊ(գ)*		2			48	410
171	Շախմատ	Հլգ(գ) կամ Մ(գ)	Մ(գ) * կամ Հլգ(գ)*		2			23	350
172	Գեղարվեստական լուսանկարչություն**	ԳԼՀ(բ)			1			17	520
173	Օպերատորություն**	ՕՊՀ(բ)			1			17	520
174	Հագուստի մոդելավորում**	Գծն						30	530
175	Դեկորատիվ կիրառական արվեստ**	Գծն			1			35	530
176	Գործիքային կատարողականություն**	ՄԳԴ(բ)			3			26	490
177	Ռեժիսուրա**	ԴՎ			1			32	510
178	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում	ԸԱՊ(բ)			2			23	390
179	Իսպաներեն լեզու և գրականություն	Օտլ(գ)			1			29	460
180	Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ(գ) * կամ Կ(գ)*		2			120	480
181	Սոցիոլոգիա	Հլգ(գ)	Մ(գ) * կամ Օտլ(գ)*		2			38	410
182	Մշակութաբանություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) * կամ ԸՊ(գ)*		2			23	390
183	Թանգարանային գործ և պատմամշակութային կառույցների պահպանություն	Հլգ(գ)	Օտլ(գ) * կամ ՀՊ(գ)*		1			14	360
184	Լրագրություն	Հլգ(գ)			1			40	410
185	Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ	Հլգ(գ)	Օտլ(գ) * կամ ՀՊ(գ)*		2			20	360
186	Շրջակա միջավայրի գիտություններ	Քիմ(գ) կամ Կ(գ)	Ֆ(գ)*		1			24	390
187	Կառավարում (ըստ ոլորտի)**	ՍՄԳԿ(գ.բ.)						25	520
188	Սոցիալական աշխատանք	Հլգ(գ)	Օտլ(գ) * կամ Կ(գ)*		2			33	410

աստղանիշով (*) մրցութային առարկաներ- մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի աղյուսակների երրորդ սյունակում նշված տվյալ մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցութային քննության հավասար միավորների դեպքում առավելությունը կտրվի աստղանիշով (*) մեկ առարկայի դեպքում ավարտական փաստաթղթում առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին, իսկ աստղանիշով (*) մեկից ավելի առարկաների դեպքում՝ այդ առարկաների գնահատականների առավել բարձր միջին թվաբանական միավորներ ունեցող դիմորդներին.

** - Մասնագիտություններ (կրթական ծրագրեր), որոնց համար սահմանված են ներբուհական քննություններ

*** - ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն

(բ) Բանավոր
(գ) Գրավոր
(թ) Թելադրություն
(տ) Բուհի կողմից սահմանված թեստ
Հարց Հարցազրույց
Ա Աշխարհագրություն
ԱԿ Արվեստի կառավարում
Անգլ Անգլերեն լեզու
ԱՏ Արվեստի տեսություն
ԲՊ Բալետի պատմություն
ԲԽ Բեմական խոսք
ԲՀՄ Բանավոր հաղորդակցման մշակույթ
Գլ Գերմաներեն լեզու
Գծն Գծանկար
Գծ Գծագրություն
ԳԼՀ Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ
Դպար Դասական պար
ԴՎ Դերասանի վարպետություն
ԵՏՍ Երաժշտության տեսություն և սոլֆեջիո
ԵՏՏ Երաժշտական տարրական տեսություն
ԸԱՊ Ընդհանուր արվեստի պատմություն
ԸՊ Ընդհանուր պատմություն
ԸՖՊ Ընդհանուր ֆիզիկական պատրաստականություն
Իտ Իտալերեն լեզու
Իս Իսպաներեն լեզու
ԼԿՀ Լուսանկարչության հիմունքներ
ԾԿ Ծրագրի կատարում
ԿՏ Կերպարվեստի տեսություն
Կոմպ Կոմպոզիցիա
Կ Կենսաբանություն
Կոլ Կոլոքվիում
ԿՊՏ Կերպարվեստի պատմություն և տեսություն
ԿՊ Կերպարվեստի պատմություն
Հլգ Հայոց լեզու և գրականություն
ՀՊ Հայոց պատմություն
Մ Մաթեմատիկա
ՄՊ Մշակույթի պատմություն
ՄՀ Մասնագիտական հարցազրույց
Մասն Մասնագիտություն
ՄԳԴ Մասնագիտական գործիք և դիրիժորություն
ՆԵՍԿ Նվագարաններով երաժշտական ստեղծագործության կատարում
Նկ Նկարչություն
Ռլգ Ռուսաց լեզու և գրականություն
Ռլ Ռուսաց լեզու
Ռեժ Ռեժիսուրա
ՍԵՏ Սոլֆեջիո և երաժշտության տեսություն
ՍՄԳԿ Սոցիալ-մշակութային գործունեության կազմակերպում
ՍՇ Ստեղծագործական շարադրություն
ՍԱ Ստեղծագործական աշխատանք
Սմ Ստեղծագործական մրցույթ
Քիմ Քիմիա
Օտլ Օտար լեզու (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն)
ՕՊՀ Օպերատորության հիմունքներ
Ֆ Ֆիզիկա
Ֆրլ Ֆրանսերեն լեզու

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 31.05. 2020 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ